

Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
ապրիլի 10-ի N 395-Լ որոշման

«Հավելված N 5
ՀՀ կառավարության 2020 թվականի
հուլիսի 16-ի N 1218-Լ որոշման

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N**

քաղաք Երևան, _____ թվական

Պայմանագրի կողմերը.

ՎԱՃԱՌՈՂ՝

«_____» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (պետական գրանցման համարը՝ __, ՀՎՀՀ՝ __, հասցեն՝ ք.), ի դեմս ՍՊԸ տնօրեն __ի:

ԳՆՈՐԴ՝

«_____» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (պետական գրանցման համարը՝ __, ՀՎՀՀ՝ __, հասցեն՝ ք.), ի դեմս ՍՊԸ տնօրեն __ի:

ԳՐԱՎԱՌՈՒ՝

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, որի անունից Հայաստանի Հանրապետության կառավարության N ____ որոշման համաձայն հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար _____՝ մի կողմից և [...] -ի (գրանցման համար՝ [...], ՀՎՀՀ [...]), որի անունից հանդես է գալիս [պաշտոն] [անուն] [ազգանուն], որը գործում է _____ [կանոնադրության/լիազորագրի] հիման վրա:

Կողմերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (հետագայում՝ օրենսգիրք) և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներով, կնքեցին անշարժ գույքի առուվաճառքի սույն պայմանագիրը (հետագայում՝ պայմանագիր) հետևյալ պայմաններով.

1. Վաճառողը, հիմք ընդունելով ____ որոշումը, _թ.-ին տրված, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ _ վկայականի համաձայն սեփականության իրավունքով իրեն պատկանող, Երևան, ____ հասցեում գտնվող անշարժ գույքը, բաղկացած՝ ____ կադաստրային ծածկագրով __ (____) քառակուսի

մետր մակերեսով **հողամասից**, ____ կադաստրային ծածկագրով ____ (____) քառակուսի մետր մակերեսով **շինությունից**, պայմանագրով սահմանված պայմաններով վաճառում է գնորդներին, իսկ գնորդները պայմանագրով սահմանված պայմաններով, վաճառողից որպես սեփականություն ձեռք են բերում այն:

2. Համաձայն _____ փորձագիտական եզրակացության՝ շինության գինը սահմանվում է ____ (____) Հայաստանի Հանրապետության դրամ, որը գնորդը վաճառողին վճարում է ոչ ուշ, քան պայմանագիրը նոտարական վավերացմամբ ստորագրվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գումարը փոխանցելով վաճառողի վերը նշված բանկային հաշվին:

3. Համաձայն _____ փորձագիտական եզրակացության՝ հողամասի գինը սահմանվում է ____ (____) Հայաստանի Հանրապետության դրամ, որը որևիցե դեպքում ենթակա չէ վճարման գնորդի կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը փոխանցվել է վաճառողին անհատույց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 16-ի N 1218-L որոշման հիման վրա:

4. Վաճառողն անշարժ գույքը հանձնում է գնորդին հանձնման-ընդունման ակտի ստորագրման միջոցով:

5. Պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցման պահից, անշարժ գույքի նկատմամբ դադարում է վաճառողի սեփականության իրավունքը, զուգահեռաբար ծագում է գնորդների սեփականության իրավունքը:

6. Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից երկու հազար քառերեք թվականի _____ ին տրված N _____ միասնական տեղեկանքի համաձայն անշարժ գույքի նկատմամբ առկա են սահմանափակումներ, քանի որ անշարժ գույքը N _____ և N _____ գրավի պայմանագրերով գրավադրված է:

7. Գրավառու կողմը, ստորագրելով սույն պայմանագիրը, հայտնում է իր համաձայնությունը, որ վաճառողը գնորդին սեփականության իրավունքով փոխանցի սույն _____ հասցեում գտնվող անշարժ գույքը:

8. Գնորդը պարտավորվում է ամբողջությամբ կատարել/պահպանել նվիրաբերության պայմանագրով նվիրատուի ստանձնած պարտականությունները/պարտավորությունները: Նվիրաբերության պայմանագրի մեկ օրինակը փոխանցվել է գնորդին սույն պայմանագրի կնքման պահին:

9. Գնորդն ընդունում է, որ անշարժ գույքը շարունակելու է լինել գրավադրված ի ապահովումն _____ սույն պայմանագրի 8-րդ կետով գնորդի ստանձնած պարտավորությունների:

10. Պայմանագրի նոտարական վավերացման օրվա դրությամբ անշարժ գույքի առնչությամբ չմարված հարկային պարտավորություններ չկան, որի մասին է վկայում ——.——.20—— թ.-ին տրված տեղեկանքը:

11. Պայմանագրի կատարումից կողմերի միջև ծագած և պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

12. Կողմերի միջև ծագած տարաձայնությունները (վեճերը), որոնք հնարավոր չի եղել հարթել փոխադարձ համաձայնությամբ, ենթակա են լուծման դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության նյութական և դատավարական իրավունքների նորմերի կիրառմամբ:

13. Պայմանագիրը ենթակա է պարտադիր նոտարական վավերացման: Պայմանագիրը կնքված է համարվում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ անշարժ գույքի նկատմամբ գնորդների սեփականության իրավունքի պետական գրանցման պահից: Պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կրում են գնորդները:

14. Պայմանագիրը բաղկացած է երեք թերթից, այն կնքվել է չորս հավասարազոր օրինակով և մեկական օրինակով պահվելու է կողմերի մոտ, պայմանագիրը վավերացնող նոտարական գրասենյակում և պայմանագրի պետական գրանցումն իրականացնող մարմնում:

Ծանոթագրություն: (Սույն պայմանագրի օրինակելի ձևը կարող է ներառել սրորագրման պահին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պարտադիր համարվող այլ կարգավորումներ կամ փոփոխվել նման կարգավորումներին համապատասխանեցվելու նպատակով):»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ